ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » 2024թ. N----Ն

ՈՐՈՇՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի Ն 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» Ն 1-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Երևանի ավագանու կանոնակարգի 42-րդ կետում «առնվազն մեկ քառորդ» բառերը փոխարինել «առնվազն կեսից ավելին» բառերով:

2) Երևանի ավագանու կանոնակարգի 52-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրմամբ՝

«52. *Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե որոշմանը կողմ են քվեարկել Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի մեծամասնությունը: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է Հանձնաժողովի նախագահը*»:

Երևանի ավագանու «Մայր Հայաստան»
խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի Ն 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ավագանու ներկայացրած որոշման նախագծով նախատեսվում է կատարել փոփոխություն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի Ն 1-Ն որոշման 42-րդ և 52-րդ կետերում:

Վերոգրյալ որոշման 42-րդ կետով նշված է. *Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը և այն վարում է Հանձնաժողովի նախագահը կամ նրա տեղակալը, իսկ նրանց միաժամանակյա բացակայության դեպքում՝ նիստին ներկա տարիքով ավագ անդամը:*

Փոփոխությամբ առաջարկվում է «*առնվազն մեկ քառորդը*» բառերը փոխարինել «*առնվազն կեսից ավելին*» բառերով:

Հաջորդիվ՝ 52-րդ կետով սահմանվում է. *Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե որոշմանը կողմ են քվեարկել Հանձնաժողովի նիստին ներկա Հանձնաժողովի անդամների մեծամասնությունը, բայց ոչ պակաս քան Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի մեկ քառորդը: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է հանձնաժողովի նախագահը:*

Սույն նախագծով առաջարկվում է վերը նշված կետը շարադրել հետևյալ խմբագրմամբ՝ «52. *Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե որոշմանը կողմ են քվեարկել Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի մեծամասնությունը: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է Հանձնաժողովի նախագահը* :»:

Երևան քաղաքի ավագանու հանձնաժողովների կողմից որոշումների ընդունման գործող կարգը ընդհանուր հակասում է Տեղական ինքնակառավարման և ժողովրդավարության սկզբունքներին: Ըստ էության, հանձնաժողովը տարբեր հարցերի կարող է տալ դրական կամ բացասական եզրակացություն բացարձակ փոքրամասնության կողմից, ինչը, բնականաբար, չի արտահայտում մեծամասնության կարծիքը:

Վերոնշյալից հետևում է, որ ընդհանուր առմամբ հանձնաժողովի որոշումները չեն ընդունվում արդար և ժողովրդավարական ձևով:

Հանձնաժողովի դիրքորոշումը փաստացի նախնական եզրակացությունն է հանձնաժողովում

ներկայացված օրակարգի հարցերի վերաբերյալ, որը կանխորոշիչ դեր է ունենում ավագանու նիստի ընթացքում: Մասնավորապես, չզեկուցվող նախագիծը զեկուցվող դառնալու, առավել մանրամասն քննարկելու, օրակարգից հանելու՝ ուղղումներ, փոփոխություններ և լրացումներ կատարելու համար և այլ: Սույն նախագծի ընդունումը հնարավորություն կտան առավել մանրամասն տեղեկանալ բարձաձայնված խնդիրներին և առավել կդարձնի Երևան քաղաքի կառավարումը և Երևանի բնակիչների խնդիրների լուծումը:

Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հանձնաժողովի նիստերի ընթացքում բարձրացնել ներկայացուցչությունը, ինչը նշանակում է, որը քվորումը կապահովվի մեծամասնության ներկայությամբ և որոշումները կընդունվեն հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի մեծամասնության մասնակցությամբ: Մեծամասնության քվեարկությամբ ընդունված որոշումները կարտացոլեն մեծամասնության շահերը՝ հիմքում ունենալով նաև փոքրամասնության դիրքորոշումները:

Արդյունքում՝ կբարձրանա որոշումների կայացման ընթացքում արդյունավետությունը, հաշվետվողականությունը և հրապարակայնությունը:

Երևանի ավագանու «Մայր Հայաստան»
խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010 Երևան, Վ.Սարգսյան 3/8, հեռ. 594-004
Էլ. փոստ info@moj.am

N /27.3/17370-2024
«3» մայիսի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավինյան,

Ի պատասխան Ձեր՝ 2024 թվականի ապրիլի 11-ի թիվ 01/62583-24 գրության՝ կից ներկայացնում ենք «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X

ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆ

Կատարող՝ Արուսյակ Ֆահրադյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-129

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նախաբանի ««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և» բառերն անհրաժեշտ է հանել:

2. Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետի «փոփոխությամբ և» բառերն անհրաժեշտ է հանել, «Հանձնաժողովի» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «52.» թիվը, իսկ «անդամների» և «նախագահը» բառերից առաջ կիրառվող «հանձնաժողովի» բառն անհրաժեշտ է փոխարինել «Հանձնաժողովի» բառով:

Իրավական ակտերի փորձաքննության

գործակալություն

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
1.	ՀՀ արդարադատության նախարարություն «3» մայիսի 2024թ N /27.3/17370-2024	**ՊԵՏԱԿԱՆ ԿՈՐՊԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ** **«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ** «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման (այսուհետ՝ Որոշում) նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝ 1. «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նախաբանի «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և» բառերն անհրաժեշտ է հանել:	1. Ընդունվել է: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և» բառերը հանվել են:

		2.Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետի «փոփոխությամբ և» բառերն անհրաժեշտ է հանել, «Հանձնաժողովի» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «52.» թիվը, իսկ «անդամների» և «նախագահը» բառերից առաջ կիրառվող «հանձնաժողովի» բառն անհրաժեշտ է փոխարինել «Հանձնաժողովի» բառով:	2. Ընդունվել է: Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետի «փոփոխությամբ և» բառերը հանվել են, «Հանձնաժողովի» բառից առաջ լրացվել է «52.» թիվը, իսկ «անդամների» և «նախագահը» բառերից առաջ կիրառվող «հանձնաժողովի» բառը փոխարինվել է «Հանձնաժողովի» բառով:

«Մայր Հայաստան»

խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան